**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ու Մ Ը

**ՔԱՂԱՔԱՑԻ ԹԱԴԵՎՈՍ ԴԵՐՄԵՆՋՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 165-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 16 նոյեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող Թ. Դերմենջյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Թադեւոս Դերմենջյանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Թ. Դերմենջյանի՝ 10.06.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ

ՀՀ օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

**1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքն ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին եւ ուժի մեջ մտել 1986 թվականի հունիսի 1-ից:

Դիմողն ի սկզբանե վիճարկել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1-7-րդ հոդվածների եւ 165-րդ հոդվածի սահմանադրականությունը: Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմի 22.06.2010թ. ՍԴԴԿՈ/2-21 որոշմամբ դիմումի քննության ընդունումն օրենսգրքի 1-7-րդ հոդվածների մասով մերժվել է, դիմումը քննության է ընդունվել միայն օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասի մասով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների եւ իրավական այլ ակտերի խախտումները» վերտառությամբ վիճարկվող 165-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետությունում ապրանքների իրացման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման փողային գնանշումները, ինչպես նաեւ այդ գործարքների դիմաց դրամական (փողային) վճարումները Հայաստանի Հանրապետության դրամով իրականացնելու պահանջը չկատարելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ խախտման գումարի չափով, բայց ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, ընդ որում՝ յուրաքանչյուր պահանջի մի քանի խախտումներ թույլ տալու դեպքում յուրաքանչյուր խախտում համարվում է մեկ խախտում»:

**2.** Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 08.05.2009թ. հանձնարարագրի հիման վրա հարկային տեսուչները «Ռաֆայել 1» Ա/Կ-ում անցկացրել են «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի եւ արժութային հարաբերությունները կանոնակարգող այլ իրավական ակտերի պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում՝ 11.05.2009թ. կազմված ստուգման ակտում արձանագրվել է «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների խախտում: Նշված ակտի հիման վրա դիմողը ենթարկվել է վարչական պատասխանատվության ըստ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի: Դիմողի

նկատմամբ նշանակվել է տուգանք՝ նշված հոդվածի 1-ին մասով սահմանված նվազագույն չափով: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի հարկային տեսչությունը դիմել է ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Ռաֆայել 1» Ա/Կ-ի՝ Թ. Դերմենջյանից տուգանքը բռնագանձելու պահանջով: Թ. Դերմենջյանը ներկայացրել է հակընդդեմ հայց՝ վարչական գործով պատասխանողի 26.05.2009թ. վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը եւ վերոհիշյալ ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջով: ՀՀ վարչական դատարանի 20.10.2009թ. վճռով հայցը մերժվել է, իսկ Թ. Դերմենջյանի հակընդդեմ հայցը՝ բավարարվել: Պատասխանող ՀՀ ԿԱ ՊԵԿ Սպանդարյանի հարկային տեսչությունը 11.11.2009թ. ներկայացրել է վճռաբեկ բողոք ընդդեմ վարչական դատարանի նշված վճռի: ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 22.04.2010թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարել է ամբողջությամբ, բեկանել է ՀՀ վարչական դատարանի բողոքարկված վճիռը, փոփոխել է այն եւ որոշել հօգուտ ՀՀ պետական բյուջեի Թ. Դերմենջյանից բռնագանձել նշանակված տուգանքը:

**3.** Օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասի ենթադրյալ հակասահմանադրականության առնչությամբ դիմողը հիմնականում առաջադրում է այդ հոդվածով սահմանված տուգանքի մեծության անհամաչափության խնդիր՝ գտնելով, որ այդ հոդվածի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկված անձը կրում է իր զանցանքին «ոչ համաչափ պատիժ»: Վիճարկվող նորմով սահմանված տուգանքի չափի անհամաչափությունը դիմողը փորձում է փաստարկել ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածով սահմանված տուգանքի չափերի եւ վիճարկվող նորմով սահմանված տուգանքի չափի միջեւ, ինչպես նաեւ ՀՀ քրեական օրենսգրքի նշված հոդվածով սահմանված՝ տուգանքը վճարելու կարգի եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածով սահմանված՝ 165-րդ հոդվածով նախատեսված տուգանքը վճարելու կարգի միջեւ համեմատության միջոցով:

**4.** Պատասխանողը գտնում է, որ դիմողն առավելապես բարձրացնում է առկա իրավակարգավորման նպատակահարմարության եւ իր նկատմամբ կայացված վարչական ակտի իրավաչափության հարց:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածն իրավակիրառողի կողմից ընկալվում եւ մեկնաբանվում է միատեսակ, տարամեկնաբանությունների տեղիք չի տալիս, որոշակի է իրավակիրառողի եւ իրավադրույթի հասցեատերերի համար:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող հոդվածի հակասահմանադրականության առնչությամբ դիմողն իր դիմումը հիմնավորում է բացառապես իրավակարգավորման նպատակահարմարության վերաբերյալ իր մոտեցումները ներկայացնելով՝ որեւէ կերպ չհիմնավորելով վիճարկվող նորմի եւ ՀՀ Սահմանադրության միջեւ առկա որեւէ հակասություն:

Պատասխանողը գտնելով, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտման եւ վիճարկվող դրույթի միջեւ որեւէ պատճառահետեւանքային կապ առկա չէ, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 եւ 23.03.2010թ. ՍԴՈ-870 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ միջնորդել է գործի վարույթը կարճել:

**5.** Սահմանադրական դատարանն իրավաբանական պատասխանատվության, այդ թվում՝ վարչական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սահմանադրական սկզբունքի բովանդակությանն անդրադարձել է իր՝ 2010թ. հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-920 որոշման մեջ: Մասնավորապես, անդրադառնալով պատասխանատվության տեսակները, չափերն ու հարկադրանքի միջոցները սահմանելու՝ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված լիազորությունն իրականացնելիս օրենսդրի հայեցողության շրջանակներին՝ սահմանադրական դատարանը նշել է, որ՝ օրենսդրի հայեցողության ազատության սահմանները նախանշված են, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ եւ 43-րդ հոդվածներում: Սահմանադրության նշված հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ դրանց իրավական բովանդակությունը, ի թիվս այլոց, հանգում է նրան, որ հանրային իշխանության իրականացումը նախեւառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ հասարակական հարաբերությունների կարգավորման համաչափության ընդհանուր սկզբունքով: Այս սկզբունքը հանդիսանում է նաեւ իրավաբանական պատասխանատվության, այդ թվում՝ վարչական պատասխանատվության հիմքում ընկած կարեւորագույն սկզբունքներից մեկը…: Սահմանադրական դատարանը, անդրադառնալով համաչափության սկզբունքի բովանդակությանը, նաեւ նշել է, որ «համաչափության սկզբունքն առաջին հերթին պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի եւ պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջեւ»:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումներին համապատասխան՝ սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը փաստելով, որ դիմողը հիմնականում

վարչական ակտի իրավաչափության հարց է բարձրացնում, այդուհանդերձ, անհրաժեշտ է համարում պարզել այն իրավաչափ նպատակը, որը հետապնդվում է վիճարկվող նորմով նախատեսված զանցանքի համար սահմանված պատասխանատվությամբ, քանի որ վերջինս կարեւոր է նաեւ օրենսդրության հետագա բարեփոխումների տեսանկյունից:

**6.** Հայաստանի Հանրապետությունում արժութային հարաբերությունները կարգավորող հիմնադրույթներն ամրագրված են մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 142-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում Հայաստանի Հանրապետության դրամն անվանական արժեքով պարտադիր ընդունման համար օրինական վճարամիջոց է: Նույն օրենսգրքի 356-րդ հոդվածը պարտավորեցնում է դրամական պարտավորություններն արտահայտել Հայաստանի Հանրապետության դրամով:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004թ. նոյեմբերի 24-ին ընդունված՝ «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը կանոնակարգում է Հայաստանի Հանրապետության արժույթով գործարքների իրականացումը: Այդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման դրամական (փողային) գնանշումներն իրականացվում են, Հայաստանի Հանրապետության տարածքում ռեզիդենտների միջեւ ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման դիմաց փողային վճարումներն ընդունվում եւ իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով, բացառությամբ նշված օրենքով նախատեսված դեպքերի: Հիշյալ օրենքի 10-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում դրանում նշված սուբյեկտների կողմից արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների եւ դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջների խախտման համար, իսկ, այդ սուբյեկտներից բացի, ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ անձանց կողմից արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների եւ դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջների խախտումների առնչությամբ հղում է կատարում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքին:

Վերոհիշյալ իրավանորմերի եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի համադրված վերլուծությունը վկայում է, որ օրենսգրքի 165-րդ հոդվածի հիմնական նպատակն է ստեղծել իրավական երաշխիք

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոհիշյալ դրույթների եւ «Արժութային կարգավորման եւ արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջների, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող արժութային քաղաքականության կատարումն ապահովելու համար:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող նորմով սահմանված վարչական պատասխանատվությունն իրավաչափ նպատակ է հետապնդում՝ ապահովել Հայաստանի Հանրապետության տարածքում ՀՀ ազգային արժույթի՝ դրամի կայունությունը եւ ձեւավորել դրամի նկատմամբ վստահություն ներքին արժութային շուկայում:

Ազգային արժույթի առկայությունը պետական ինքնիշխանության հատկանիշներից մեկն է, իսկ ազգային արժույթի կայունության ապահովվածությունը՝ պետական իշխանության արդյունավետության չափանիշներից մեկը: Նիշյալ նպատակին պետությունը հասնում է իրականացվող դրամավարկային քաղաքականության եւ դրա շրջանակներում իրականացվող արժութային կարգավորման, այսինքն՝ արժույթով կատարվող գործարքների պայմանների եւ կարգի սահմանմամբ եւ այդ կարգի պահպանման նկատմամբ հսկողություն եւ վերահսկողություն իրականացնելու միջոցով: Արժութային կարգավորման նպատակն է ապահովել ոչ միայն տնտեսական աճ, այլեւ պետության տնտեսական անվտանգությունը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը եւ ելնելով պաշտպանվող հանրային շահի կարեւորությունից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմով սահմանված տուգանքի նվազագույն չափի եւ դրանով հետապնդվող իրավաչափ նպատակի միջեւ օրենսդրի հայեցողական լիազորությունների շրջանակներում սահմանված հավասարակշռությունը սահմանադրականության խնդիր չի առաջացնում:

Ինչ վերաբերում է դիմողի կողմից՝ վիճարկվող դրույթով սահմանված տուգանքի մեծության անհամաչափությունը ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածով սահմանված տուգանքի վճարման կարգի ու տուգանքի չափերի եւ վիճարկվող նորմով սահմանված տուգանքի չափի եւ օրենսգրքի 305-րդ հոդվածով սահմանված՝ տուգանք վճարելու կարգի միջեւ համեմատության միջոցով փաստարկելուն՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի մատնանշած հանգամանքները վերաբերելի չեն՝ վիճարկվող նորմով սահմանված տուգանքի մեծության համաչափությունը գնահատելու տեսանկյունից: Քրեական օրենսդրությամբ նախատեսված պատժաչափերն ունեն վարչական պատասխանատվությունից որակապես տարբերվող նպատակներ եւ առաջացնում են իրավական տարբեր հետեւանքներ:

**7.** Իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սահմանադրական սկզբունքը պահանջում է նաեւ, որ սահմանված պատասխանատվության չափը լինի տարբերակված՝ ելնելով կատարված արարքի ծանրությունից, հանրային վտանգավորության աստիճանից, պատճառված վնասից, մեղքի աստիճանից եւ այլ էական հանգամանքներից: Ըստ այդմ, օրենսդրից պահանջվում է սահմանել պատասխանատվության այնպիսի իրավակարգավորում, որը պատասխանատվության ենթարկող իրավասու մարմնին հնարավորություն ընձեռի որոշելու նշանակվող պատասխանատվության կոնկրետ չափը՝ ելնելով զանցանքի բնույթից եւ լրջությունից:

Վիճարկվող դրույթի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրն իր հայեցողության շրջանակներում պատասխանատվության չափի տարբերակման պահանջին համապատասխան սահմանել է տուգանքի նվազագույն չափ՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, եւ առավելագույն չափ՝ խախտման գումարի չափով: Այդպիսով՝ օրենսդիրը տարբերակել է պատասխանատվության չափը՝ իրավակիրառողին հնարավորություն տալով ըստ արարքի վտանգավորության աստիճանի եւ պատճառված վնասի չափի՝ ապահովել համաչափություն կատարված արարքի եւ նշանակվող տուգանքի չափի միջեւ այն դեպքում, երբ խախտման գումարը գերազանցում է օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի նվազագույն չափը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

**1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

**2.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

16 նոյեմբերի 2010 թվականի
ՍԴՈ-924